Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

355.45
Կ-11

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

# ԽՍՀՄ ՊԱՋԸ-ԱՎԻՈՔԻՄԻ ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՄԱՍՍԱՆԵՐԻՆ

## ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Гос. Публ. Библиотека ССРА им. А. Мясникяна
15257-57

ՅԵՐԵՎԱՆ 1931

18 JUL 2013

# ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԴԵՊԻ ՄԱՍՍԱՆԵՐԸ

## ՊԱՋԱՎԽԱՔԻՄԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

*ԽՍՀՄ Պաջավխաքիմի Կենտրոնական Խորհրդի պլենումի վորոշումը՝ աշխատանքի վերակառուցման մասին Նախագահության տված հաշվետվության առթիվ:*

### I. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՐԱԳԱՆ

Պաջավխաքիմի գործունեյությունը Ընկերության II համագումարից հետո անցել է այնպիսի պարագայում, յերբ խստիվ սրվել են կապիտալիստական սիստեմի բոլոր հակասությունները, ծավալվել ու խորացել է համաշխարհային տնտեսական ճգնաժամը, աճել են մի շարք յերկրներում հեղափոխական ճգնաժամի նախադրյալները, ուժեղանում է պայքարն իմպերիալիստական պետությունների միջև, բուրժուազիան կատաղորեն հարձակվում է բանվոր դասակարգի դեմ և խիստ ուժեղացել է իմպերիալիստական պատերազմների և առաջին հերթին՝ ԽՍՀՄ դեմ զինված ինտերվենցիայի սպառնալիքը:

Խորհուրդների յերկիրը Կոմունիստական կուսակցության ու նրա լենինյան Կենտկոմի փորձառու ղեկավարությամբ, պրոլետարիատի և աշխատավոր լայն մասսաների քաղաքական ակտիվության ու խանդավառության վիթխարի աճման պայմաններում, համատարած կոլեկտիվացման հիման վրա՝ վերացնելով կուլակությունը, վորպես դասակարգ և գյուղում ստեղծելով, հանձինս կոլխոզային գյուղացիության, խորհրդային իշխանության նոր, ամուր, իսկական հուժկու հենարան, իրագործելով չտեսնված տեմպերով ամբողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցումը, վճռական պայքար մղելով կուսակցության գլխավոր գծից կատարած բոլոր թեքումների և առաջին հերթին աջ թեքման դեմ, վորպես տվյալ էտապում գլխավոր վտանգի, արդեն ավարտում է սոցիալիստական էկոնոմիկայի հիմքի կառուցումը, մարտական խնդիր ունենալով առաջիկա տասնամյակում «հասնել ու անցնել տեխնիկական-տնտեսական տեսակետից աշխարհի առաջավոր կապիտալիստական յերկրներին»:



### II. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՒ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1 MAR 2010

Բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ Պաջավխաքիմն աճել, դարձել է 11 միլիոնանոց կազմակերպություն. զգալիորեն ավելացել է իր հեղինակությունը և ժողովրդականությունը աշխատավոր լայն խավերի մեջ, և լուծում է մի շարք համապատասխան կարեվորություն ունեցող գործնական խնդիրներ, մանավանդ յերկրի պաշտպանության ամրացման բնագավառում: Աշխատանքի մեջ կիրառելով ճիշտ բոլշևիկյան գիծ, վճռականապես պայքարելով ոպորտունիզմի ու նրա արտահայտությունների դեմ պրակտիկայում, Ընկերությունն ընդհանուր առմամբ ձեռք է բերել զգալի հաջողություններ, վորոնք արտահայտվում են հետևյալով.

ա) բարձրացել է քաղաքական ակտիվությունը, զարգացել է հասարակայնությունը, մասսայականացումը, ինքնաքննադատությունը, սոցմրցակցությունն ու հարվածայնությունը և վորոշ չափով բարձրացել է կարգապահությունը.

բ) քանակապես հաջող կատարված են 3 տարվա ընթացքում Ընկերության հնգամյա պլանի կոնտրոլ թվերը հիմնական ցուցանիշներից.

գ) ամրացել ու զարգացել է կազմաշխատանքը, կան առաջին հաջողություններ ոպերատիվության, պլանայնության ու կենդանի ղեկավարության, վերակառուցման ու վերելքի ասպարեզում.

դ) բարելավվել է աշխատանքը խոշոր ձեռնարկություններում, վորոնցից մի քանիսը վերածվել են «գործարան-ամրոցների», և ուժեղացել է աշխատանքը գյուղի սոցիալիստական սեկտորում, մանավանդ ձեռնարկություններում ու կոլխոզներում անցկացրած պաշտպանության աշխատանքի սուղատեսի հետևանքով.

յե) բարձրացել են ռազմական պատրաստության չափերն ու վորակը (վարժակայանների սիստեմին անցնելով), շրջադարձ կատարելով դեպի ռազմական տեխնիկայի տիրապետելու կողմը, կան զգալի հաջողություններ նաև ավիացիոն կադրերի պատրաստման գործում.

զ) պաշտպանության անմիջական աշխատանքի հետ միասին հաջող ձևով կիրառված են տնտեսական-քաղաքական խնդիրներ ու կամպանիաներ (պայքար արդֆինպլանի համար, բերքատվության համար, գյուղատնտեսության կոլեկտիվացման համար, խորհուրդների վերընտրություններ, մանավանդ «պաշտպանության դեկադի» կամպանիա, դիրիժաբլի շինարարության կամպանիա և այլն): Կազմակերպված են Պաջավխաքիմի անվան հազարավոր բրիգադներ ու ցեխեր, կազմակերպված են Պաջավխաքիմի անվան հարյուրավոր կոլխոզներ.

է) աճել է Ընկերության մասսայական ու գործնական աշխատանքի պրակտիկ հիմնարկների ու հենակետերի ցանցը (պաշտ-

պանության տներ, վարժարաններ, դպրոցներ, կայարաններ, հրաձգարաններ և այլն) և հիմնադրված են կապիտալ շինարարության նոր օբյեկտներ, հենարանային բազաների նոր ցանց.

ը) բարելավվել է աշխատանքը յերկաթուղային տրանսպորտում՝ գծային սկզբունքի կիրառման հիման վրա.

թ) աճել և ամրացել է Ընկերության բյուջեն և ավելացել են ԲԳԿԲ ռազմական տեխնիկայի համար ներդրումները:

Զգալի հաջողությունների ու նվաճումների հետ մեկտեղ Կենտրոնական Խորհուրդը Պաշավիաքիմի աշխատանքում նշում է մի շարք խոշորագույն թերություններ.

ա) կա աջ օպորտունիստական պրակտիկա (անպատասխանատվություն, աչքակապություն, ինքնահոս, բյուրոկրատիզմ, չարաշահություններ, մասսաների աճող ակտիվությունը և նրանց հսկայական հետաքրքրությունը դեպի պաշտպանության աշխատանքը բոլշևիկորեն գլխավորելու անհմտությունը, Պաշավիաքիմի մի շարք կազմակերպություններում ղեկավարության և աշխատանքի մեջ քաղաքական սրվածության անբավարարությունը, Ընկերության առանձին օղակներում քաղաքական խորթ տարրեր խցկվելու դեպքերը, վոր հայտաբերել է Կենտխորհուրդը (Պոլտավայի, Նիկոլայեվսկի, Պենզայի, Վլադիվոստոկի, Արևմտյան Օբլաստի և ուզբեկական կազմակերպություններում).

բ) տեմպերի պրոբլեմը, վորակն ու արդյունավետությունը մի շարք կազմակերպություններում տակավին մնում են չլուծված.

գ) Ընկերության ամբողջ աշխատանքի շրջադարձը յերեսով դեպի ռազմական տեխնիկան իրագործվում է անբավարար չափով.

դ) ակտիվի պատրաստման ու վերապատրաստման խնդիրները և կադրերի ամրացումը՝ նրանց վոչ լրիվ կոմպլեկտի, հոսունության և անբավարար վորակավորման հետ միասին Ընկերության աշխատանքում մնում է ամենանեղ տեղերից մեկը.

յե) կազմաշխատանքում ծանրության կենտրոնը տակավին դարձված չէ դեպի բջիջը, ցեխը, օղակը, բրիգադը և տեղամասը, աշխատանքի նոր ձևով ու նոր պայմաններում վերակառուցման խնդիրը տակավին լուծված չէ, իսկ ռայոնական օղակը դեռ լրիվին ամրացված չէ.

զ) անբավարար է զարգացած արդֆինպլանի կատարման աշխատանքը ռազմական, ավիացիոն և քիմիական արդյունաբերության ձեռնարկություններում.

է) Ընկերության աշխատանքը գյուղի սոցիալիստական սեկտորում անբավարար չափով է զարգացած, իսկ խոշոր նոր շինարարություններում ու սեզոնային բանվորների մեջ մի շարք կազմակերպությունների աշխատանքը անբավարար է.

ը) վորոշ հառաջադիմության հետ միասին այնուամենայնիվ ավիամասսայական աշխատանքներում նկատվում է ժամանակակից պարագայից ու Ընկերության խնդիրներից զգալի հետամնացություն. Թույլ է ավիամասսայական կադրերի զգալի մասսաները



և համարյա բացակայում է այդ կադրերի պատրաստությունը. միանգամայն անբավարար է օգտագործվում ընդհանուր մամուլը, վորի թվում նաև ստորին մամուլը. Համարյա բացակայում է մեթոդական գրականությունը. Թույլ է առաջավոր կազմակերպությունների փորձի հաշվառումը.

թ) Հասարակական ակտիվության աճման ու բարձրացման հետ միասին բջիջների և շրջանային խորհուրդների վորոշ մասի աշխատանքներում նկատվում է աշխատանքի ակտիվության և ակտիվության վորոշ թուլացում. այդ նկատվում է նաև մի շարք ռայոնական, յերկրային, մարզային և հանրապետական խորհուրդների ինչպես նաև Կենտխորհրդի նախագահությունների աշխատանքում. Պլենումը միաժամանակ նշում է, վոր վոչ միայն թուլացել է մի շարք կազմակերպություններում կամավոր ակտիվին ղեկավարության մեջ ներգրավումը, այլև մի շարք կազմակերպությունների կողմից տեղ-տեղ կա կամավոր ակտիվի աշխատանքը փոխարինելու վարձու ապարատի աշխատանքով.

ժ) ՏՎՈ-ի (Հակօդային պաշտպանություն) աշխատանքը չնայած կոնտրոլ առաջադրանքների կատարմանը, խստիվ անհամապատասխան է իր վորակով պաշտպանության աճած պահանջներին. իսկ քիմիացման աշխատանքը համարյա բոլոր օղակներում չափազանց թույլ է զարգացած. միանգամայն անբավարար է ծավալված աշխատանքը ՆԻՍ-ի (գիտական-հետազոտական սեկտոր) վերաբերյալ. Համարյա բացակայում է աշխատանքը ջրային տրանսպորտում և ԲԳԿԲ բջիջներում.

ի) թույլ է աշխատանքը մի շարք սահմանամերձ ռայոններում, միքանի ազգային հանրապետություններում և ազգային փոքրամասնությունների մեջ.

լ) անբավարար է աշխատանքը կանանց մեջ, մանավանդ գյուղում, ինչպես նաև պիոներների ու «Պաշավիաքիմի պատանի բարեկամների մեջ».

խ) չափազանց սուր է մատակարարման հարցը, վորը դարձել է Պաշավիաքիմի աշխատանքում ամենանեղ տեղերից մեկը, վորի շնորհիվ գոյացել է խզում գործնական աշխատանքի ծավալման և նրա նյութական-տեխնիկական ապահովման մեջ: Այդ հանգամանքն արգելակ է հանդիսանում գործնական աշխատանքի բարձր վորակի համար մղած պայքարում և դանդաղեցնում է ռազմական տեխնիկայի տիրապետման համար մասսայական արշավի ծավալումը.

ծ) կազմակերպությունների ճնշող մեծամասնությունում չափից դուրս վատ հիմքերի վրա յե դրված զենքի ու հրապաշարի հաշվառումը, պահպանումը, խնամումը և նպատակահարմար օգտագործումը.

կ) ղեկավարության պլանայնությունն ու օպերատիվությունը միանգամայն անբավարար են. չափազանց անբավարար են հաշվառումը, ինֆորմացիան, կատարման ստուգումը, աշխատանքի դրական փորձի փոխանակությունը: Հասարակական ու ֆինանս-

կան կարգապահությունը կազմակերպությունների մեծ մասում տակավին գտնվում են ցածր մակարդակի վրա.

հ) Ընկերության գործնական աշխատանքներում դեռ թույլ են զարգացած սոցմրցակցությունն ու հարվածայնությունը.

ձ) Կենտխորհրդի պլենումը նշում է մի շարք թերություններ հենց Կենտխորհրդի նախագահության աշխատանքում.—«Ռոտաֆիլմ» ամսագրում կան մի շարք սխալ ձևակերպումներ, ուշանում են առանձին դիրեկտիվներն ու վորոշ չափով յետ է մնում առանձին հարցերի դրումը Պաշավիաքիմի աշխատանքում. բավարար չէ նոր դրական փորձի հաշվառումն ու տեղերին փոխանցելը. բավարար չէ իր վորոշումների կատարման ստուգումը. ա. կարգապահություն կա նախագահության անդամների մի մասի մեջ, վորոնք զլանում են իրենց պարտականությունների կատարման մեջ, չկա տեղերի հետ բավական չափով կենդանի կապ և օպերատիվ ղեկավարություն, չնայած վոր դրանք բարելավվել են հաշվետու շրջանում, բավականաչափ դիֆերենցիացիայի չի յենթարկված ղեկավարությունը, թույլ է աշխատանքը սեկտորներում ու ՆԻՍ-ի, ՏՎՈ-ի և քիմիական բաժիններում. բավականաչափ չի օգտագործվում հասարակական ակտիվը Կենտխորհրդի շուրջը:

## III. ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Պատերազմի վտանգի աճումը, սոցշինարարության հաջող զարգացումը ՍՍՀՄ-ում, վոր արմատական փոփոխում է առաջացրել արտադրության և ամբողջ աշխատանքի մեջ, աշխատավորների քաղաքական ակտիվության բարձրացումը, Պաշավիաքիմի շարքերի վիթխարի աճումը, Ընկերության կողմից մի շարք այնպիսի առաջադրանքների կատարումը, վորոնք մտնում են պաշտպանության և սոցշինարարության ընդհանուր պետական պլանի մեջ,—այս բոլորը պահանջում է Պաշավիաքիմից «նոր ձևի» ղեկավարություն և աշխատանք, պահանջում է վճռականապես վերակառուցել իր ամբողջ գործունեությունը:

2. Պաշավիաքիմի աշխատանքի վերակառուցման վճռական մոմենտը հանդիսանում է պայքարի է՛լ ավելի ուժեղացումը՝ կուսակցության գլխավոր գծի հաստատուն կենսագործման ու օպորտունիզմի դեմ մղած պայքարի հիման վրա՝ ձեռք բերելու համար աշխատանքում և ղեկավարության մեջ քաղաքական տոկունություն:

3. Առավելագույն չափով ամրացնելու համար յերկրի պաշտպանունակությունը, անհրաժեշտ է ռազմապաշտպանական անմիջական բնույթ կրող խնդիրների հետ միասին, վորը Պաշավիաքիմի հիմնական խնդիրներն է կազմում, բոլոր կազմակերպությունների և անդամների ամբողջ մասսայի է՛լ ավելի մեծ չափով մասնակցությունը սոցիալիստական շինարարության մեջ: Պաշավիաքիմի մասնակցությունը սոցշինարարության մեջ պետք է արտահայտվի հետեվյալով.



ա) մոբիլիզացիայի յենթարկել անդամների մասսաներին՝ պայքարելու արդֆինպլանի համար ձեռնարկություններում, սովխոզներում, ՄՏԿ (մեքենա-տրակտորային կայաններում) և կոլխոզներում, լոզունգ ունենալով՝ «Պաշավիաքիմի յուրաքանչյուր անդամ — արտադրության հարվածային, արտադրության յուրաքանչյուր հարվածային — Պաշավիաքիմի անդամ».

բ) մոբիլիզացիայի յենթարկել Ընկերության գյուղական բջիջներին՝ աջակցելու գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցմանը, ցանքի, հողամասի ընդարձակմանը, ցանելով «պաշտպանության հեկտար» և կռվելու համար գյուղատնտեսության վնասատուների դեմ.

գ) ամեն կերպ բարձրացնել հասարակական կարգապահությունը, դաստիարակել մասսաների հասարակական գիտակցությունը.

դ) ամենաակտիվ կերպով աջակցել ավիացիոն, քիմիական ու ռազմական արդյունաբերության զարգացմանը. Պաշավիաքիմի բջիջների բոլոր ուժերն արդյունաբերության այդ ճյուղերում պետք է մոբիլիզացիայի յենթարկել՝ պայքարելու արդֆինպլանի կատարման, ինքնարժեքի իջեցման, արտադրանքի վորակի բարձրացման համար:

4. Վերակառուցման կարեվորագույն խնդիրն է հանդիսանում ռազմական տեխնիկայի տիրապետումը: Կադրերի պատրաստության համար պրակտիկ աշխատանքի հետ միասին պետք է կազմակերպվի ռազմատեխնիկական պրոպագանդ, առաջին հերթին ագիտմասսայական բաժինների ու ՆԻՍ-երի ուժերով, հրատարակելով հանրամատչելի բրոշյուրներ, օգտագործելով ռադիոն, կինոն, ամսագրերը, վորակյալ դեկուցումներ և այլն, վորի համար հարկավոր է կազմակերպել բոլոր խոշոր կենտրոններում ռազմագիտական պրոպագանդի բյուրոներ: Պաշավիաքիմի ռազմական պատրաստության ընդհանուր պլանի մեջ՝ ռազմական ուսուցման մասնագիտական տեսակները պետք է բռնեն աչքի ընկնող տեղ:

5. Վերակառուցման հաջողության վճռական պայմանը հանդիսանում են ուժերի ճիշտ բաշխումը, ընտրությունը, Ընկերության ղեկավար կադրերի պատրաստությունն ու դաստիարակությունը: Այդ նպատակով.—

ա) Ընկերության շարքերը պետք է զտել դասակարգային խորթ տարրերից. այն անձինք, վորոնք չեն կարողանում աշխատել նոր ձևով նոր պայմաններում, չեն կարողանում գլխավորել մասսաների աճող ակտիվությունն ու պահանջկոտությունը, պետք է հեռացվեն ղեկավարությունից.

բ) անհրաժեշտ է վճռականապես առաջ քաշել ղեկավար աշխատանքի համար վարի ակտիվիստներին, առաջին հերթին՝ բան-

վորներից ու բանվորուհիներից, Պաշավխաքիմի հարվածայիններից.

գ) կադրերի հսկայական հոսունության, նրանց սակավության, կամպանիաներ անցկացնելու համար աշխատողների հաճախակի մոբիլիզացիայի և այլի առթիվ միջնորդել համապատասխան մարմիններին՝ ամրացնելու Պաշավխաքիմին մի շարք նոմենկլատուրային այնպիսի աշխատողներ, վորոնք յենթակա չեն աշխատանքից վերցնելու, տեղափոխելու առանց Ընկերության վերադաս կազմակերպության գիտության ու համաձայնության։ Ընկերության ղեկավար կադրերի ուսումնասիրության, հաշվառման, պատրաստության, վերապատրաստության և ուժերի նպատակահարմար ձևով բաշխելու համար բոլոր կազմակերպությունների սիստեմում՝ մինչև ռայխորհուրդները ներառյալ, ստեղծել կադրերի բաժիններ (ռայոնում բացառապես ի հաշիվ հաստիքից դուրս հասարակական ուժերի). միանգամայն հերթից դուրս և առանց միջոցներ խնայելու ծավալել Ընկերության կադրերի պատրաստման ու վերապատրաստման դասընթացների ու դպրոցների ռայոնական, մարզային ու կենտրոնական լայն ցանց (յերկարատև ուսուցումով).

դ) մշակել Ընկերության ակտիվիստների հատուկ հաշվառման հարցը (հարվածային պաշավխաքիմցիներ Պաշավխաքիմի արտադրական ու պրակտիկ աշխատանքներում, բոլոր այն անձինք, վորոնք պարգևատրված են Պաշավխաքիմի ակտիվիստի նշանով, շտատից դուրս հրահանգիչներ, բաժինների ու սեկտորների օրինակելի ղեկավարներ, խորհուրդների, բջիջների բյուրոների անդամներ և այլն). մշակել նրանց խրախուսանքի, Ընկերության մեջ նրանց արտոնությունների, առավելությունների տալու հարցը.

ե) վճռականապես վերացնել ղեկավարության կառուցման գոյություն ունեցող սխեմը, մի սխեմ, վորն արդելակ է դարձել շնորհիվ յերկվության, զուգահեռության և հասարակական գծով ու ապարատային սեկտորների ղեկավարության մեջ տիրող անպատասխանատվության։ Ամրացնելով ու վորակապես բարելավելով ապարատի աշխատանքը, Պաշավխաքիմի աշխատանքը հիմնականում կառուցել չբեռնաթափված կամավոր ակտիվի վրա, օգտագործելով ապարատն առաջին հերթին, վորպես լայն կամավորական հասարակայնության կազմակերպիչ։

6. Կենտրոնացնելու համար հիմնական ուժերն ու միջոցներն աշխատանքի առավել կարևոր բնագավառներում և առաջին հերթին ռազմական աշխատանքի ասպարիզում, անհրաժեշտ համարել Ընկերության առանձին ֆունկցիաների վերացումը, կրճատելու համար յերկրորդական խնդիրները թե՛ ամբողջությամբ վերցրած և թե՛ աշխատանքի առանձին ճյուղերի սահմաններում (ՆԻՍ, գյուղատնտեսական աշխատանք և այլն)։



## IV. ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍՏՈՐԻՆ ԲՋԻՋՈՒՄ ՆՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Աշխատանքի ու ղեկավարության վերակառուցման հարվածային բնագավառը պետք է համարել Ընկերության ստորին բջիջը։ Ընդ սմին պետք է հաշվի առնել, վոր՝

ա) մի շարք ֆունկցիաներ առանձնացվում են բջիջներից (ռազմական պատրաստությունը վարժակայաններում, ավիաաշխատանքը և այլն).

բ) վարի օղակը (բրիգադ, ավիեդաս, և այլն, վորը ղեկավարվում է ընտրովի խմբակային կազմակերպիչով), կատարում է գլխավորապես կազմակերպչական և մասսայական աշխատանք.

գ) միջին օղակը (ցեխային ու շրջանային (участковый) բջիջը), կուրս ընդունելով կազմակերպչական-մասսայական, դաստիարակչական աշխատանքը, զգալի չափով աշխատանքը կատարում է գործնական կազմակերպություններում (խմբակներ, անկյուններ), վորը կազմակերպչորեն ապահովվում է սեկտորներ ստեղծելով (կազմակերպչական ագիտմասսայական, ֆինանսական և այլն)։ Պաշավխաքիմի խորհուրդը լիովին ապահովում է Պաշավխաքիմի ամբողջ աշխատանքի ղեկավարությունը, հատկապես շեշտը դնելով իր աշխատանքում ակտիվի կադրերի բաշխման ու դաստիարակության վրա և ամբողջ պրակտիկ աշխատանքի ապահովման վրա.

դ) բջիջի աշխատանքը պետք է կառուցվի ակտիվիստների միջև աշխատանքի ճիշտ բաշխման սկզբունքի վրա (սեկտորի, աշխատանքի բնագավառի, ճյուղի ղեկավարություն, անձնական կոնկրետ հանձնարարություն). հաշվի առնելով կանանց միջև աշխատանքի բարելավման հատուկ կարևորությունը, պլենումն անհրաժեշտ է համարում վերականգնել բոլոր աստիճաններում կանանց միջև աշխատանք տանող սեկտորների կազմակերպումը։

Պլենումը հանձնարարում է Կենտխորհրդի նախագահությանը՝ յերկու ամսվա ժամանակամիջոցում ստորին ակտիվի մասնակցությամբ մշակել Պաշավխաքիմի բջիջների նոր կանոնադրություն։

## V. ՄԻՋԻՆ ՈՒ ՎԵՐԱԴԱՍ ՈՂԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Ռայոնական, մարզային, յերկրային, հանրապետական խորհուրդների ու Կենտխորհրդի աշխատանքի վերակառուցումը պետք է կատարվի՝ ամեն կերպ հասարակայնության, պատասխանատվության, ճկունության, կոնկրետության և կենդանի ղեկավարության զարգացման սկզբունքով։ Այդ նպատակով հարկավոր է անմիջապես վերացնել ապարատային ու հասարակական սեկտորների զուգահեռ գոյությունը։ Բաժիններն ու սեկտորները պետք է գլխավորվեն վոչ միայն ազատված, այլև չազատված աշխատողներով, առաջին հերթին նախագահության կամ խորհրդի անդամներով։ Յուրաքանչյուր բաժին ու սեկտոր ջոկում է ու խըմ-

բավորում էր շուրջը կամավոր ակտիվ: Անհրաժեշտ է դադարեցնել մոտակա ժամանակներում հաստիքների ավելացումն ի հաշիվ հաստիքից դուրս հրահանգիչների հենարանի: Պարբերաբար բաժիններում կամ սեկտորներում պետք է հրավիրվեն ճյուղերի խորհրդակցություններ ու կոնֆերանսներ: Բաժինների սիստեմում հիմնական վերակառուցման յենթակա յե ամենից առաջ կազմբաժինը, վորը պետք է կազմակերպի կադրերի ու հաշվառման-պլանային ինքնուրույն կազմհրահանգչական բաժին՝ կոնտրոլի ու կատարման ստուգման բյուրոյի հետ: Տրանսպորտային աշխատանքում գծային սկզբունքի հետագա ամրացման հարցը պետք է հանձնել համամիութենական կազմխորհրդակցության քննարկման:

Հատուկ ուշադրություն պետք է նվիրել նախագահությունների ու խորհուրդների աշխատանքի ակտիվացմանը: Նախագահությունների նիստերը պետք է տեղի ունենան վաղօրոք մշակված օրացույցով ու պլանով (դեկադը մեկ անգամ): Յերկրորդական բոլոր հարցերը պետք է հանձնվեն քարտուղարության ու բաժինների լուծման: Նախագահության յուրաքանչյուր անդամ պետք է վորոշ անհատական բեռնավորում հանձն առնի, պարբերաբար ստանա առաջադրանքներ և առաջին հերթին ստանա առաջադրանք՝ վարին բջիջում աշխատանքը դնելու և ուսումնասիրելու վերաբերյալ (ամրացում մի վորոշ ստորին բջիջի): Նախագահությունների ու խորհուրդների բանվորական մասի հետ (գործարանների ու ֆաբրիկների ներկայացուցիչներ) պետք է տարվի դաստիարակչական աշխատանք: Պլենումը հանձնարարում է Կենտխորհրդի նախագահությանը՝ մշակել յերկրային, մարզային, հանրապետական խորհուրդների և տրանսպորտային կազմակերպությունների աշխատանքի ու կառուցվածքի նոր կանոնադրություն, ինչպես նաև մշակել Կենտխորհրդի ապարատի կառուցվածքի կանոնադրություն:

Աշխատանքի ամբողջ սիստեմում անհրաժեշտ է վերջ տալ նիստային դատարկաբանությանը (заседательская сдетия) և թղթային քաշքշուկին, վճռականապես ներկցվել ղեկավարության կենդանի ձևերին:

Առաջին հերթին անհրաժեշտ է ամրացնել շրջագայության համար բեռնաթափված և վոչ բեռնաթափված կադրեր, մշակել տեղերը շրջագայելու խիստ օրացուցային պլան, ընդլայնել վարի աշխատողների ճյուղային (отраслевые) խորհրդակցությունների պրակտիկ հրավիրումներ, ավելացնել շարժական դպրոցների ցանցը և այլն. ընդարձակել նախագահությունների ու խորհուրդների նիստերի պրակտիկան գործարաններում, սովխոզներում ու կոլխոզներում և լսել Ընկերության խոշոր ստորին կազմակերպությունների զեկուցումները: Իրենց ժամանակի համարյա կեսը բեռնաթափված աշխատողները պետք է, վորպես կանոն, անցկացնեն ստորին ողակում: Օգոստոս, սեպտեմբեր ամիսների ընթացքում մոբիլիզացիայի յենթարկել յերկարատև ժամանակով



մարզային, հանրապետական ու ռայոնական խոշոր կազմակերպությունների պատասխանատու աշխատողների 10 %-ին՝ անմիջական աշխատանք տանելու համար ձեռնարկությունների, խորհտնտեսությունների, ՄՏԿ ու կոլտնտեսությունների Պաշավիաքիմի բջիջներում: Դիրեկտիվները պետք է կազմակերպվեն, խնամքով հաշվի առնելով առանձին ռայոնների առանձնահատկությունները (դիֆերենցիալ մոտեցում):

Հատուկ ուշադրություն պետք է նվիրել հաշվառման, ինֆորմացիայի հարցերին, դրական փորձի ընդհանրացմանն ու փոխանակությանը, ըստ վորում բոլոր կազմակերպությունները պետք է պարբերաբար իրազեկ լինեն այն մասին, թե տվյալ մոմենտում այս կամ այն կազմակերպությունն ինչպիսի տեղ է գրավում Ընկերության մեջ: Հանձնարարել Կենտխորհրդի նախագահության՝ վերանայել հաշվառման գոյություն ունեցող բոլոր ժամկետներն ու ձևերը, ինչպես նաև ճյուղային ոպերատիվ հաշվառումը, մանավանդ ռազմական պատրաստության, հակօդային պաշտպանության (ՏՎՈ–ի) և ավիաաշխատանքի գծով:

Կատարման ստուգման գծով գործադրել տույժերի միջոցներ այն կազմակերպությունների և անձանց նկատմամբ, վորոնք ժամանակին չեն կատարել պլանները և վերադաս մարմինների ղեկավարության ցուցումները:

Հատուկ ուշադրություն նվիրել հասարակական կարգապահության ամրացմանը: Հասարակական տույժերի միջոցների ուժեղացման հետ միասին լայն չափով գործադրել առանձին ակտիվիստների ու աչքի ընկնող կազմակերպությունների խրախուսանքի միջոցները:

## VI. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՍԵԿՏՈՐՈՒՄ

Ընկերության աշխատանքի վերակառուցման խնդիրները գյուղատնտեսության սոցիալիստական սեկտորում պահանջում են.

ա) ավելի ևս բարձրացնել դասակարգային աչալրջությունը և ուժեղացնել մասնակցությունը գյուղատնտեսության կոլեկտիվացման մեջ.

բ) զարգացնել հարվածայնությունն արտադրությունում, տեխնիկայի պրոպագանդը, «պաշտպանության հեկտարը», պայքարը վնասատուների դեմ, պայքարը ջրի համար (ռազմականացրված ախոռներ — Հյուսիսային Կովկասի Միլլերովյան ռայոնի փորձը). զարգացնել ավիացիոն հրապարակման ցանցը, պլանյորիզմն ու մոդելիզմը.

գ) կազմակերպչական վերակառուցումները կատարել համաձայն IV հատվածում տրված դրույթի և Պաշավիաքիմի համամիութենական խորհրդակցության՝ կոլտնտեսություններում տարվելիք աշխատանքների վերաբերյալ վորոշման հիման վրա.

դ) ծավալել ռազմական աշխատանքը ՄՏԿ, խորհտնտեսու-

թյուններում ու կոլտնտեսություններում, վերջինների մեջ որպես հատուկ խմբակ առանձնացնելով սահմանամերձ կարմիր բանակայինների ու նախկին պարտիզանների կոլտնտեսությունները. քաղաքային աշխատանքի ձևերը (վարժակայաններ ու վարժաշաբային միավորներ) փոխանցել և լայնորեն զարգացնել պատրաստության հատուկ տեսակները, հաշվի առնելով և օգտագործելով գյուղատնտեսական ձեռնարկությունների արտադրական առանձնահատկություններն ու տեխնիկական հիմքը (տրակտորային, ատլյորական գործ, կապ, ռադիո, հեծելակային գործ).

ե) հատուկ ուշադրություն նվիրել կանանց մեջ տարվող աշխատանքին.

զ) ագիտմասսայական աշխատանքում ուշադրությունը կենտրոնացնել պատերազմի վտանգի լուսաբանման խնդիրների, ինտերնացիոնալ լայն դաստիարակության վրա.

է) միաժամանակ անհրաժեշտ է շարունակել աշխատանքն անհատական սեկտորում. այն ռայոններում, որտեղ կան ՄՏԿ, խորհտնտեսություններ, կոլտնտեսություններ, մենատնտեսներին ընդգրկող Պաշավիաքիմ բջիջները պետք է ամրացվեն մոտակա խորհտնտեսությունների, ՄՏԿ և կոլտնտեսությունների Պաշավիաքիմ բջիջներին:

## VII. ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԸՍՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՃՅՈՒՂԵՐԻ

1. ԱԳԻՏՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ հատուկ ուշադրություն դարձնել լայն ինտերնացիոնալ դաստիարակության, ռազմական պրոպագանդի, ագիտպրոպաշխատանքի ձևերի խորացման, ագիտմասսայական աշխատողների կադրերի պատրաստության, ռազմական ուսուցման սիստեմում քաղապահովման ուժեղացման վրա: Հաշվի առնելով Պաշավիաքիմ գրականության վիճակի պահանջը և այդ հարցի անապահովությունը Պետհրատի կողմից, հարց առաջադրել Պաշավիաքիմի սիստեմում ինքնուրույն հրատարակչություն հիմնելու մասին: Պլենումը հանձնարարում է նախագահությանը՝ հասնել Ընկերության 2-րդ համագումարի որոշումների իրացման՝ սեփական կենտրոնական օրաթերթ հրատարակելու մասին:

Կարևորագույն խնդիր համարել ագիտմասսայական աշխատանքի ընդարձակումն ազգային հանրապետությունների և ազգային փոքրամասնությունների աշխատավորների մեջ, հատուկ ուշադրություն դարձնելով ազգային լեզվով գրականության հրատարակման վրա: Ապահովել պաշտպանության տների ու խրճիթների, որպես մասսայական աշխատանքի հենարանների, ցանցի առավելագույն զարգացումը:



2. ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ հիմնական շեշտը դնել վարժակայանների ցանցի ամրացման ու զարգացման վրա, որոնք Պաշավիաքիմի սիստեմում հանդիսանում են ռազմական պատրաստության հիմնական ձևը: Վարժակայաններում անհրաժեշտ է կենտրոնացնել բջիջների տրամադրության տակ գտնվող բոլոր ամենաարժեքավոր ձեռնարկները: Հատուկ ուշադրություն պետք է բևեռել զենքի ու մարտապաշարի հաշվառման, խնամման, պահպանման և առավելագույն արդյունավետությամբ օգտագործման վրա: Զենքի, տեխնիկայի ու հրապաշարների անխույթ խնամման համար հանցավորները պետք է պատժվեն անխնա կերպով: Անմիջապես պետք է միջոցներ ձեռք առնել պատրաստելու նրանց պահպանման համար պահեստներ: Վճռականապես դատապարտելով այն առանձին կազմակերպությունների, որոնք թերագնահատում են ՀամԼԿՅԸՄ IX համագումարի որոշման քաղաքական հսկայական նշանակությունը, որտեղ խոսվում է կոմսոմոլի ընդհանուր պարտադիր ռազմական ուսուցման մասին Պաշավիաքիմի սիստեմում, կոմերիտականների ռազմական ուսուցման աշխատանքը համարել կարևորագույն խնդիրներից մեկը: Կազմակերպել ռազմական ուսուցման հատուկ տեսակների ցանց, համաձայն այս կամ այն արտադրության բնույթի (էլեկտրիկներ, ռադիստներ, կապավորներ, տանկիստներ և այլն): Ամրացնել ռազմահրահանգչական կադրը, առաջ քաշելով այդ աշխատանքի համար պահեստի քաղաքականապես տոկուն հրամանատարներ և թե՛ կազմակերպելով ռազմական կրտսեր հրահանգիչների դպրոցներ: Ռազմական հրահանգիչները պետք է ընդգրկվեն ռազմական պարապմունքներով, մոտեցնելու համար նրանց պատրաստության մակարդակը ԲԳԿԲ ժամանակակից պահանջներին: Ռազմական պատրաստության ծանրության կենտրոնը պետք է դարձնել ռազմական տեխնիկայի տիրապետումը: Ծովային պատրաստության բնագավառում վճռական մոմենտը համարել վարժակայանների ու մանր մարտական նավերի և գլիսերների ստեղծումը: Խնդրել ԽՍՀՄ Հեղափոխական Խորհրդին՝ օգնություն ցույց տալ Ընկերությանը՝ տեխնիկական միջոցների մատակարարման գործում:

3. ԱՎԻԱՑԻՈՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ: Չնայած Ընկերության ձեռք բերած հաջողություններին՝ ռազմական ու քաղաքացիական ավիացիայի զարգացման և ամրացման բնագավառում, Պաշավիաքիմի տարած աշխատանքի ժամանակակից մակարդակը չի համապատասխանում այն բարձր պահանջներին, որ առաջադրվում են ԽՍՀՄ քաղաքացիական ավիացիայի զարգացումով:

Երկրի ավիաֆիկացման հարցերը պետք է Պաշավիաքիմի ամբողջ սիստեմում գրավեն կարևորագույն տեղերից մեկը: Ամենալայն զարգացում պետք է ստանան օդաչվական ու պլանյորիզմի դպրոցները: Լայն զարգացում պետք է ստանա սպորտային և սակա-

վառուժ ավիացիան։ Պլենումը հանձնարարում է նախագահությանը՝ հասնել սակավազոր մոտորների ու սավառնակների գործարանի ամենաարագ կառուցմանը և արագացնել պլանյորական ավիական գործարանի կառուցումը։ Անհրաժեշտ է կտրուկ ուժեղացնել ավիացիոն պրոպագանդը, վերակսել տարեկան ավիացիոն տոնակատարությունը, կազմակերպել խորհրդային մեծ թռիչքներ, ընդարձակել ավիոցուցահանդեսների, տեխնիկումների ցանցը։ Ընկերությունը պետք է ամենաակտիվ մասնակցություն ցույց տա թռիչքների անվտանգության տեխնիկան ապահովելու, ոդերևութաբանական և կապի ծառայությունը զարգացնելու և բարելավելու գործում։

Պլենումն առաջարկում է Ընկերության բոլոր կազմակերպություններին՝ մշտական աջակցություն ցույց տալ Քաղաքացիական Ոդային Նավատորմի Համամիութենական Ընկերությանը (ВОГВФ)։ Անմիջապես սկսել կազմակերպել բոլոր ավիացիոն հանգույցային կետերում ավիոբաժիններ և ոդային յերթևեկության էկոնոմիկայի ու իրավունքի կոմիտեներ, ուժեղացնել ոդանավատորմային էկոնոմիստների և իրավաբանների կադրերի պատրաստման գործը և սկսել հրատարակել այդ հարցերի վերաբերյալ մասսայական, գիտական-հետազոտական ու վարժական գրականություն։

Ոդագնացության բնագավառում ամրացնել դիրիժաբլաշինարարության կոմիտեների աշխատանքը թե՛ Կենտխորհրդին կից և թե՛ տեղերում։ Խնդիր առաջադրել դիրիժաբլաշինարարության համար հավաքել մինչև 1931 թվի վերջը 20 միլիոն ռուբլի։ Խորհրդային դիրիժաբլաշինարարությունը պետք է գործնականապես աջակցություն ստանա հասարակական լայն ոգնությամբ և Պաշտպանքիմի ուշադրությամբ։ Պետք է ձեռք առնել բոլոր միջոցառումները՝ ամենաարագ կերպով իրագործելու մանր դիրիժաբլային ծրագիրը, վերակառուցելով Պաշտպանքիմի Կենտխորհրդի դիրիժաբլային բաժնի ՎՈԳՎՖ հետ միասին։

4. ՀԱԿՈԴԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ հիմնական խնդիր համարել քաղաքացիական բնակչության անգրագիտության մասսայական վերացման աշխատանքների զարգացումը վարժակայանների սիստեմի միջոցով, կադրերի պատրաստությունը, հակոդային պաշտպանության խմբերի ՎՆՈՍ-ի ոպերատիվ վորակի ապահովումը. Կենտկոմի պլենումը ժամանակին է համարում հակոդային պաշտպանության պասիվ միջոցների հետ միասին նաև ակտիվ միջոցների աջակցության ու զարգացման գործում մասնակցություն ցույց տալը։

5. ՔԻՄԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ պլենումն առաջարկում է կազմակերպել քիմիական սեկտորներ Ընկերության բոլոր ղեկավար սեկտորներում, ապահովել նրանց ղեկավար աշխատողներով՝ քիմիական ծառայության պահեստի պետակազմից։

Այդ բնագավառի գործնական աշխատանքում հիմնական ուշադրությունը դարձնել.



ա) ռազմաքիմիական վարժակայանների միջոցով աշխատավորների ռազմաքիմիական պատրաստության ծավալումը.

բ) պայքար արդֆինպլանների կատարման համար քիմիական արդյունաբերության այն ճյուղերում, վորոնք ապահովում են քիմիական պաշտպանությունը.

գ) գյուտարարության, կոնստրուկտորական և գիտական-հետազոտական գործունեության ծավալումը քիմիական պաշտպանության բնագավառում.

դ) պաշտպանքիմցիների կադրերի պատրաստությունը՝ ծավալելու համար քիմիական պաշտպանության ամբողջ աշխատանքը.

ե) ակտիվ մասնակցությունը մարտիկի և աշխատավորի մաքրության և առողջացման արշավին.

6. Համկոմկուսի (բ) Կենտկոմի հունիսյան պլենումի վորոշման հետևանքով Ընկերության յերկրային (տերիտորիալ) խորհուրդները պետք է խնդիր առաջադրեն աջակցելու և ամրացնելու Պաշտպանքիմի բջիջները յերկաթուղային ու ջրային տրանսպորտում։

7. ԳԻՏԱԿԱՆ-ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՍԵԿՏՈՐՈՒՄ (ՆԻՍ-ի) ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ։ Հիմնական աշխատանքը համարել ՆԻՍ-ի աշխատանքի ներկցումը ռազմա-տեխնիկական գիտելիքների մասսայականացմանը։ ՆԻՍ-ի աշխատանքը պետք է ստանա ավելի մասսայական բնույթ, ներգրավելով պաշտպանության աշխատանքներին գիտական ու ճարտարապետական-տեխնիկական լայն ուժերին։ Հատուկ ուշադրություն պետք է դարձնել բանվորական ռազմական գյուտարարության աջակցության վրա։ Հանձնարարել նախագահությանը՝ վերանայել հարցերի այն շրջանը, վոր մշակում է ՆԻՍ-ը, զգալիորեն կրճատելով նրա աշխատանքի ճյուղերն ու ծավալը։

8. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈՒ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ հիմնական չեշտ դնել կապիտալ շինարարության զարգացման վրա, հատկացնելով այդ գործին 1932 թվին ընդհանուր բյուջեի 30 տոկոսը։ Վորովհետև գործնական աշխատանքի ծանրության կենտրոնը փոխանցվում է միջբջիջային բազային հիմնարկները, ուստի Կենտխորհուրդը պարտադիր է համարում գործադրել միջբջիջային կետերի գործնական աշխատանքի պահելու և կահավորելու համար։ Վորովհետև VI վիճակախաղի իրացումը լինելու է միայն 1932 թվին, 1931 թվին ամբողջ Միությունում անցկացնել անդամների ինքնահարկման կամպանիա տարեկան անդամավճարի չափով։ Հատուկ ուշադրություն դարձնել ֆինանսական կարգապահության ամրացման և տնտեսհաշվարկման սկզբունքի կիրարկման վրա։ Սնարների (մատակարարների) աշխատանքում վճռական կուրս ընդունել արտադրական ձեռնարկությունների ցանցի ընդարձակումը և վերանորոգման արհեստանոցների ցանցի կազմակերպությունը։ Միջոցներ ձեռք առնել մշակելու համար մատակարարման հնգամյա պլան։

9· ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ: *Հաշվի առնելով մի շարք կազմակերպություններում վերստուգիչ հանձնաժողովների և Պաջավիաքիմի նախագահությունների միջև տեղի ունեցող անհամաձայնությունները, վերստուգիչ հանձնաժողովների տվյալ եռամյա խնդիրների վորոշ անորոշությունը, վորը կարող է առաջացնել աշխատանքում ավելորդ զուգահեռություն, ինչպես նաև հաշվի առնելով վերստուգիչ հանձնաժողովների աշխատանքի ամեն կերպ ամրացման, նրանց հեղինակության բարձրացման, նրանց կազմն ակտիվ աշխատողներով ամրացման անհրաժեշտությունը, պլենումը հանձնարարում է Ընկերության բոլոր կազմակերպություններին՝ ամեն կերպ ոգնություն ցույց տալ վերստուգիչ հանձնաժողովներին՝ նրանց աշխատանքում, ջոկելով վերստուգիչ հանձնաժողովների կազմի համար աշխատունակ և հեղինակավոր ընկերներ: Կենտխորհրդի նախագահությունը ՑՏԿ-ի հետ միասին, յելնելով Բանկոմի 2-րդ համամիութենական խորհրդի և համամիութենական խորհրդակցության վորոշումներից, վերջնականապես ճշտել Բանկոմի պարտականությունների սահմանը և բոլոր ատյաններում Բանկոմի և Ընկերության նախագահության միասին աշխատանքի կարգը:*

## VIII· ՀՆԳԱՄՅԱԿԻ ՄԱՍԻՆ

*Իրագործելով «Ընկերության հնգամյակը չորս տարում» լոզունգը, պլենումը հանձնարարում է Կենտխորհրդի նախագահությանը ամենամոտ ժամանակում մշակել Պաջավիաքիմի 2-րդ հնգամյակը, լրիվին համաձայնեցնելով այն ընդհանուր պետական հնգամյակի հետ, ապահովելով ընկերության տեղական կազմակերպությունների մասնակցությունը նոր հնգամյակի հիմնական տվյալների մշակման գործում:*

## IX· ԿՈՄՍՈՄՈԼԻ ՅԵՎ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԻ ՄԱՍԻՆ

*Նշելով, վոր կոմսոմոլը զգալի հրջադարձ է կատարել դեպի ռազմական ուսուցումը, պլենումը միևնույն ժամանակ արձանագրում է, վոր անբավականաչափ է կոմսոմոլի մասնակցությունը Պաջավիաքիմի աշխատանքներում, վորի համար վորոշ չափով հանցավոր են և Պաջավիաքիմի կազմակերպությունները:*

*Պաջավիաքիմի բոլոր կազմակերպությունները բոլոր ողակներում պարտավոր են ապահովել ղեկավարության մեջ կոմյերիտական ակտիվի առավելագույն մասնակցությունը և վերից վար ամրացնել ամենասերտ առօրյա կապ կոմսոմոլի կազմակերպությունների հետ:*

*Պետք է ուժեղացնել արհմիությունների մասնակցությունը Պաջավիաքիմի աշխատանքներում: Պաջավիաքիմի կազմակերպությունները պետք է հայտարարեն անհրաժեշտ համառություն ապահովելու համար ձեռնարկություններում ռազմական աշխատանքի միասնական պլանի պրակտիկան: Կենտխորհրդի պլենումը դիմում Համարհմխորհին (ՎՑՍՊՍ) հատկացնել համապատասխան միջոցներ Պաջավիաքիմի կազմակերպություններին՝ արհմիությունների անդամների ռազմական պատրաստության համար:*

## X· ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

*Նոր խնդիրների հաջող լուծումը, ինչպես նաև աշխատանքներում յեղած բոլոր թերությունների վերացումը կարող են ապահովել միայն այն դեպքում, յերբ կոմիտեները վերից վար քաղաքական բացառիկ տոկուն ղեկավարություն, դասակարգային գծի հաստատուն կիրառում աշխատանքի ամբողջ սիստեմում, անդուլ պայքար օպորտունիզմի բոլոր արտահայտությունների դեմ, աշխատանքի վճռական վերակառուցում և Պաջավիաքիմի կազմակերպության վերից վար պրոլետարական ամենալայն ինքնագործունեության ծավալում:*

*Վճռական նշանակություն ունեն ձեռք բերած հաջողությունների ամրացումը, մասսաների աճող ակտիվությունը գլխավորել կարողանալը, աշխատանքի ամբողջ սիստեմում բոլշևիկյան փորձված մեթոդների՝ սոցմրցակցության ու հարվածայնության ոգտագործումն ու զարգացումը:*

*Վերակառուցելով և ամրացնելով ձեռք բերած հաջողությունները, Պաջավիաքիմը պետք է միշտ ել լինի այն խնդիրների բարձրության վրա, վոր առաջադրում է կուսակցությունը կամ դրվում են պաշտպանության նկատառումներով և ընթացիկ պարագայի նոր ու շարունակ փոխվող պահանջների մակարդակին հավասար: Ղեկավարվելով իր ամբողջ գործունեության մեջ լենինյան կուսակցության գլխավոր գծով, ե՛լ ավելի սերտորեն համախմբելով իր շարքերը կուսակցության շուրջը Պաջավիաքիմի 11 միլիոնանոց մասսան ամենակարճ ժամանակամիջոցում կհաղթահարի բոլոր դժվարությունները, թերությունները և պատվով կկատարի իր պարտքը խորհուրդների յերկրի հանդեպ:*

* * *

## ԿԿԱՏԱՐԵՆՔ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀՆԳԱՄՅԱԿԸ ՉՈՐՍ ՏԱՐՈՒՄ

### ՊԱՋԱՎԻԱՔԻՄԻ ԿԵՆՏԽՈՐՀՐԴԻ ՊԼԵՆՈՒՄԻ ԲԱՆԱՁԵՎԸ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԻ ՄԱՍԻՆ

1· *Պատերազմի վտանգի աճումն իմպերիալիստների կողմից ընդդեմ միջազգային պրոլետարիատի հարվածային բրիգադի,— ԽՍՀՄ, վորն այս տարի լենինյան կուսակցության ղեկավարությամբ և աշխատավոր մասսաների ակտիվության չտեսնված թափով ավարտում է սոցիալիստական էկոնոմիկայի հիմքի կառուցումը, բարձրացնում է պահանջները դեպի ամբողջ խորհրդային հասարակայնությունը՝ սոց· շինարարության աջակցության և յերկրի պաշտպանության ամրացման գործում: Առանձնապես աճել է խորհրդային հասարակայնության առաջավոր ջոկատի՝ Պաջավիաքիմի դերը:*

2· *Հարկավոր է Պաջավիաքիմն առավել լրիվ և կազմակերպված*



15257-57
им. А. Мясникяна

կերպով մասնակցի սոցշինարարության գործում և յերկրի պաշտպանությանը, Ընկերության 2-րդ համագումարը հիմնականում հաստատել է հնգամյակը, որը կառուցված է կուսակցության գլխավոր գծի ապահովման հիման վրա և համաձայնեցված է յերկրի ժողովրդական–տնտեսական պլանի ու պաշտպանության պլանի հետ: Հնգամյակը չպատելով Ընկերության աշխատանքի ամբողջ բովանդակությունը, մանավանդ մասսայական աշխատանքի, կամպանիաներ անցկացնելու, դաստիարակչական աշխատանքի և արդֆինպլանի կատարման համար մղած պայքարի խնդիրների բնագավառում նպաստել է, թեև ոչ բավական չափով,— աշխատանքի վերակառուցմանը և այդ աշխատանքն ավելի բարձր աստիճանի վրա դնելուն: Հնգամյակի իրագործումն Ընկերության գործունեության մեջ մտցրեց պլանայնություն, կոնկրետություն, օպերատիվություն և ղեկավարության պատասխանատվություն, բարձրացրեց աշխատանքի տեմպերն ու որակը, հաշվառումն ու կատարման ստուգումը, ինչպես նաև կոնկրետ առաջադրանքների հիման վրա սոցմրցության ու հարվածայնության ծավալումը Ընկերության աշխատանքի վճռական բնագավառներում և առաջին հերթին՝ կադրերի պատրաստման բնագավառում:

3. Առաջին յերկու տարիների կատարման արդյունքները և հնգամյակի յերրորդ տարվա առաջին կիսամյակի աշխատանքների ընթացքը վկայում են, որ այդ առաջադրանքները հիմնականում կատարված ու գերակատարված են: Պլանի գերակատարումն առաջին հերթին ապահովված է Ընկերության շարքերի աճման, ագիտմասսայական աշխատանքի, ռազմական պատրաստության և նրա մասնագիտական տեսակների, մանավանդ՝ ավիացիոն աշխատանքի բնագավառում և Ընկերության գործունեության այն բոլոր տեսակներում, որոնք վերաբերում են գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցմանն ու բերքատվության համար մղված պայքարին:

4. Հնգամյակի իրագործման ժամանակ թույլատրված են յեղել մեծ թերություններ, ճեղքվածքներ և խայտաբղետություն գանազան կազմակերպությունների կողմից՝ կատարման աստիճանի մեջ: Հիմնական թերությունները, սխալներն ու ճեղքվածքները հանգում են հետևյալին.

ա) Ընկերության կազմակերպությունների մեծ մասում թերագնահատված են, չափազանց ցածր մակարդակի վրա յեն դրվում պլանային սկզբունքի նշանակությունը և ուշադրությունը դեպի պլանային աշխատանքը:

բ) Մի շարք հանրապետական, յերկրային ու մարզային Պաշավիաքիմի խորհուրդները չափազանց ուշացան ռայոններին պլանը հասցնելու գործում, նրանց մի մասը բավականացավ միայն հերթական տարվա աշխատանքի համար կոնտրոլ թվեր տալով, հաճախ բաց յեյին թողված մի շարք ցուցանիշներ, միանգամայն անբավարար է ոգտագործված հանդիպական պլանի մեթոդը և վերջապես՝ կազմակերպությունները մեծ մասամբ չկատարեցին պլանը յուրաքանչյուր բջիջին հասցնելու խնդիրը:



գ) Չնայած Ընկերութ. 2-րդ համագումարի հաստատած դիրեկտիվին, որը շեշտում եր աշխատանքի որակական ցուցանիշների ապահովման հատուկ կարևորությունը, որպեսզի ապահովվի սոցշինարարության և պաշտպանության ներդրման իրոք աճող լինելը, աշխատանքի որակական մակարդակը և նրա արդյունքները դրված չեն յեղել ուշադրության կենտրոնում համաձայն այն պահանջների աճման, որոնք առաջադրվում են թե կուսակցության ու կառավարության կողմից և թե մասսաների բարձրացած ակտիվության կողմից: Հսկայական յետմղումը (отсев), որը կազմում է մասսայական աշխատանքի հիմնական տեսակների տասնյակ տոկոսներ, խիստ բացասական գիծ է հանդիսանում, որը հատուկ է Ընկերության կազմակերպությունների ճնշող մեծամասնությանը:

դ) ղեկավար ու հրահանգչական կադրերի, ինչպես նաև ակտիվի կադրերի պատրաստությունը, որ թե՛ որակի և թե՛ քանակի տեսակետից ամբողջ պլանի կատարման հաջողության վճռական պայմանն է հանդիսանում, զգալիորեն թերակատարված է ամբողջ Ընկերության մեջ:

ե) Աշխատանքի մի շարք կարևորագույն ճյուղեր և առաջին հերթին հակոդային պաշտպանության (ПВО) ու քիմիացման բնագավառում, չնայած բավարար քանակական ցուցանիշներին, գտնվում է միանգամայն անբավարար վիճակում:

զ) Ընկերության զգալի թվով կազմակերպություններում աշխատանքի ապահովման նյութական–տեխնիկական անբավարարության պայմաններում, թույլատրված է միանգամայն անհանդուրժելի վերաբերմունք դեպի խնայողության ռեժիմի, հաշվառման, միջոցների կենտրոնացման, գույքի ճիշտ ոգտագործման կիրառումը: Մանավանդ անբավարար է զենքի ու ռազմական տեխնիկայի հաշվառման, պահպանության ու խնամման դրությունը:

է) Հնգամյակի կատարման աշխատանքի ղեկավարությունը չի համապատասխանում ոպերատիվության, ղեկավարության աշխուժության, գլխավոր փորձի փոխանակության ու փոխանցման պահանջներին, զգալի հետամնացություն է նկատվում հաշվառման ու կատարման ստուգման բնագավառում:

ը) Չնայած նրան, որ 1930 թիվն և 1931 թվի սկիզբը առաջադրել է մի շարք նոր խնդիրներ համաձայն պարագայում տեղի ունեցած հսկայական փոփոխությունների, շատ կազմակերպություններ չկարողացան ժամանակին ոչ միայն աշխատանքի պրոցեսում վերադասավորել խնդիրները, փոխել աշխատանքի մեթոդներն ու ձևերը, այլ և թույլ տվեցին զգալի հետամնացում այն բնագավառում, որը շեշտված է համագումարի վորոշմամբ, որպես աշխատանքի հաջողությունն ապահովելու, Ընկերության աշխատանքի արմատական վերակառուցման հիմնական պայման: Դրա հետ միասին մի շարք կազմակերպություններ (Ուրալ, Հեռավոր Արևելք, Արևմտյան մարզ, Բելոռուսիա) աշխատանքի

ղեկավարության մեջ թույլ են տվել դասակարգային գծի խախտում, վորոնք համազոր են և հանդիսանում են ոպորտունիզմի արտահայտություն պաշավիաքիմյան պլանավորման ու հնգամյակի իրագործման պրակտիկայում: Այդ բոլոր խոշորագույն սխալներն ու թերությունները պետք է հաղթահարվեն ու չքվեն այս տարվա ընթացքում, լիովին ապահովելու համար առաջին յեռամսյակի պլանների կատարումն ու գերակատարումը և պայմաններ ստեղծելու համար հնգամյակի հաջող կատարմանը վոչ թե 5, այլ հիմնականում 4 տարում:

5. Ընկերության հնգամյակը 4 տարում կատարելը և պլանից դուրս մի շարք նոր խնդիրներ մտցնելը բղխում են պարագայի հետևյալ պայմաններից ու պահանջներից.

ա) պատերազմի վտանգի աճումը.

բ) ժողովրդական տնտեսության հնգամյակի 4 և 3 տարում իրագործելու մեջ վիթխարի հաջողությունները.

գ) սոցիալիստական սեկտորի վճռական գերակշռության ձեռք բերելը գյուղատնտեսության մեջ.

դ) սոցիալական հսկայական առաջադիմությունը կապված պրոլետարիատի և կոլտնտեսական գյուղացիության թվական քանակի աճման հետ, նրանց քաղաքական ակտիվության բարձրացման հետ.

յե) արշավը տեխնիկայի տիրապետման ու Կարմիր բանակի տեխնիկական վերակառուցման համար.

զ) Պաշավիաքիմի վրա մի շարք պետական կարևորություն ունեցող խնդիրներ է դրվում և առաջին հերթին՝ ռազմական պատրաստության, ավիացիոն աշխատանքի, հակոդային պաշտպանության և գյուղատնտեսական գործունեության բնագավառներում: Միաժամանակ ի տարբերություն անցյալ տարիների, Պաշավիաքիմի վրա, վորի գործունեությունը պաշտպանության և սոցշինարարության մի շարք բնագավառներում մտնում է, վորպես բաղադրիչ մասը, դրվում է սոցշինարարության ու պաշտպանության համապետական պլանի կատարման անմիջական պատասխանատվություն.

է) կոմսոմոլի աճումը և ՀամԼԿՅԵՄ IX համագումարի վորոշումների հետևանքով կոմսոմոլի լայն արշավը՝ տիրապետելու համար ռազմական գործն ու ռազմական տեխնիկան.

ը) ամբողջ աշխատանքի վորակի բարձրացման խնդիրը, նյութական տեխնիկական ավելի բարձր բազայի բարձրացումով, վորն անհրաժեշտություն է ստեղծում բազմամիլիոն ներդրումներ անելու աշխատանքի հենակետերի կապիտալ շինարարության մեջ.

թ) մի շարք հիմնական ցուցանիշներից Ընկերության յեռամյա պլանի կատարումն ու գերակատարումը.

6. Վերոհիշյալը նկատի ունենալով Կենտխորհրդի պլենումը վորոշում է հաստատել ԽՍՀՄ Պաշավիաքիմի Ընկերության վերամշակված հնգամյա պլանը՝ 4 տարվա կատարումով: Դրա հետ



միասին պլենումը նշում է, վոր անհրաժեշտ է ուշադրությունը, ուժերն ու միջոցները կենտրոնացնել աշխատանքի հետևյալ ճյուղերի վրա.

1) անդամների սոցիալական կազմի կանոնավորման աճումը դեպի տեմպերի բարձրացման, ինչպես նաև Պաշավիաքիմի շարքերում կոլտնտեսականների ու կոմյերիտական խավի բարձրացման կողմը.

2) ավիամասսայական աշխատանքի ամբողջ սիստեմի ընդարձակումն ու խորացումը, աշխատանքի նոր տեսակների ու ձևերի ծավալումը և պաշտպանության տների շինարարությունը, 25-ից մինչև 50 տոկոսով բարձրացնելով ի հաշիվ նպատակային գանձումների պաշտպանության տների կահավորումը.

3) հատուկ ուշադրություն դարձնել կադրաշխատանքի վրա, առաջին հերթին ապահովելով Ընկերության ղեկավարության ու շարքերի վճռական վերակառուցումը, կազմակերպության ակտիվի կադրերի վերից վար պատրաստությունը, ինչպես նաև հրահանգիչների ու ղեկավարության պատրաստությունը.

4) ռազմական պատրաստության բոլոր տեսակների չափերի ընդարձակումը, խստիվ բարձրացնելով բոլոր տեսակի մասնագետների կադրերի մշակումը, պահեստի պետակազմի հետ տարվող աշխատանքի ծավալումը. Հատուկ ուշադրություն դարձնել կոմսոմոլին ուսուցման բոլոր տեսակներով և մանավանդ մասնագիտական տեսակներով ընդգրկելու, վրա թե խաղաղ և թե պատերազմի ժամանակվա համար սեփական հրահանգչական կադրերի պատրաստության և վերապատրաստության վրա, 1931 թվին մինչև 50 տոկոսով և 1932 թվին 67 տոկոսով ամբողջ ուսուցումն անցկացնել փարժակայանների, ձիավարժարանների (մանեժ), ծովային կայանների ու լողացող բազաների սիստեմներով. 1932 թվին 30 սնայպերական խմբի կազմակերպումը. մանր ռազմանավերի լրացուցիչ պատվերներ տալն արդյունաբերությանը, ապահովելով նրանց շինարարությունն ի հաշիվ նպատակային գանձումների.

5) ավելի մեծ հասարակական ուշադրության կազմակերպումը Ընկերության ավիացիոն աշխատանքի շուրջը և ուժերի կենտրոնացումը կադրերի պատրաստության վրա,—օդաչու-սավառնորդներ, մոտորիստներ, օդային նավատորմի մասնագետներ և քաղաքացիական ավիացիայի օդաչուներ. Ծավալել մեծ չափերով ոգնություն քաղաքացիական ավիացիայի շինարարությանը և կատարել վողջ Պաշավիաքիմի մոբիլիզացիան պայքարելու ավիարդյունաբերության մեջ արդֆինպլանի կատարման համար.

6) ամեն կերպ զարգացնել աշխատանքը հակոդային պաշտպանության և քիմիայի ասպարեզում հետևյալ ուղղություններով. ա) հակոդային պաշտպանության (ՏՎՈ) անգրագիտության մասսայական վերացում. բ) քիմիական անգրագիտության մասսայական վերացում և յերկրի քիմիացման պրոբլեմի պրոպագանդ-

գի լայն ծավալում. գ) Հակոդային պաշտպանության կազմակերպությունների ամբողջ սիստեմում վորակի ու ոպերատիվ արժեքի բարձրացումը. դ) ռազմաքիմիական կադրերի պատրաստության ծավալումը. ե) Հակոդային պաշտպանության ակտիվ միջոցների հետևողական ծավալումը. զ) թե՛ հակոդային պաշտպանության և թե՛ քիմիական պաշտպանության ամբողջ աշխատանքում հատուկ ուշադրություն նվիրել սեփական պաշավիաքիմյան վորակյալ կադրեր պատրաստելու վրա.

7. 1932 թվին Ընկերության գյուղատնտեսական աշխատանքի ընդարձակումը.

1932 թիվը Պաշավիաքիմի կապիտալ շինարարության տարի հայտարարել, ներդնելով պլանով նախատեսված կապիտալ միջոցները և այդ կարիքների համար մոբիլիզացիայի յենթարկելով կողմնակի միջոցներ. մասնավորապես ընդարձակել մարտական հրաձգարանների շինարարության ծրագիրը 100 տոկոսով, ընդդեմ պլանով նախատեսվածի, ապահովելով միջոցներն ի հաշիվ նպատակային գանձումների:

8. Նկատի առնելով ֆինանսական պլանի լարվածությունը, ֆինանսական հարցերը դնել ամբողջ կազմակերպության ուշադրության կենտրոնում, բարձրացնելով ֆինանսական կարգապահությունը, կիրառելով խնայողության խիստ ռեժիմը՝ տնտեսհաշվարկը և պայքարել կողմնակի միջոցներ ներգրավելու համար:

Այս վերջին բնագավառում անհրաժեշտ է ապահովել հատուկ ակտիվություն, Ընկերությունը պետք է իր աշխատանքի չափերով ու վորակով ապացուցի, վոր Պաշավիաքիմն իրոք հանդիսանում է ոգտակար ու շահավետ կազմակերպություն, վորն ապահովում է շահագրգռված կազմակերպությունների ներդրած միջոցներով մեծ արդյունավետություն, և հաճախ տալիս է զգալի խնայողություն համեմատած ծախքերի հետ միջվարչական գծով լուծելով մի շարք խնդիրներ:

9. Ընկերության ֆինանսական դրությունն ամրացնելու համար, պլենումը վորոշում է.

1) պնդել, վոր կառավարությունը հաստատի Պաշավիաքիմի 6-րդ վիճակախաղը 75 միլիոն ռուբլի գումարով. 2) Համարհմխորհի (ՎՅՍՊՍ) առաջ հարց դնել կենտրոնացնելու արհմիությունների միջոցների միջմիութենական ֆոնդը, այն միջոցների, վոր գանձվում են ռազմական աշխատանքի համար ռայոնական, մարզային, յերկրային և հանրապետական մասշտաբով. 3) անցկացնել ֆինանսական կարգապահություն, ինչպես նաև Ընկերության անդամների ինքնահարկման միամսյակ՝ մի տարվա անդամավճարների չափով, հանձնարարելով նախագահության սահմանելու այդ կամպանիայի ժամկետները. 4) ի ճշտումն Ընկերության 2-րդ համամիութենական համագումարի վորոշման և ի հաստատումն Կենտխորհրդի նախագահության ցուցումների սահմանել կոլտնտեսականների անդամավճարներ, համապատասխան սանդղակով (շկալայով), նայած կոլտնտեսականի աշխատավարձի:



10. Յելնելով նրանից, վոր Ընկերության ամբողջ աշխատանքը չափազանց անբավարար է ապահովված գրականությամբ, դասական պիտույքներով, գինավորումով, տեխնիկայով և մատակարարման հիմնական այլ տեսակներով, պլենումը հանձնարարում է Կենտխորհրդի նախագահությանը ընկերության մատակարարման տեսակետից հասնել վճռական փոփոխման, բարձրացնելով պատվերները և տալով այդ պատվերներն արդյունաբերությանը, ինչպես նաև արտադրությունից ստացած արտադրանքի մատակարարումով: Դրա հետ միասին պլենումը շեշտում է հատկապես ընկերության տեխնիկական հագեցման խնդիրը և նշում է, վոր այդ խնդրի լուծումը, վորը կազմում է տեխնիկայի համար արշավի հիմնական պայմանը, անհնար է առանց ռազմական վարչության աջակցության: Պլենումն առաջարկում է մշակել և ժամանակին տեղերին ուղարկել հնգամյակի ապահովման պլանը մատակարարման գծով:

11. Պլենումն առաջարկում է Կենտխորհրդի նախագահության մշակել շինարարության պլանայնացվող հիմնական օբյեկտների ստանդարտ տիպարներ և նրանց հաշվարկները, պարտավորեցնելով տեղական խորհուրդներին ժամանակին պահանջագրեր ուղարկել կենտրոնացված կարգով ապահովելու շինանյութերը:

12. Պլանային-հաշվառման աշխատանքը պատշաճ բարձրության վրա դնելու նպատակով պլենումն առաջարկում է. 1) Կենտխորհրդում, Ընկերության հանրապետական, մարզային ու յերկրային խորհուրդներում ստեղծել հատուկ պլանային-հաշվառու բաժիններ. 2) վերակառուցել հաշվետվության և ինֆորմացիայի սիստեմն ու ժամկետներն այնպիսի հաշվով, վոր ապահովվի հնգամյակի կատարման ընթացքի ժամանակին ստուգումը և ղեկավարության ոպերատիվությունը:

13. Պլենումն առաջարկում է Կենտխորհրդի նախագահությանը ամենակարճ ժամանակամիջոցում տեղերն ուղարկել ճշտված կոնտրոլ թվեր աշխատանքի յուրաքանչյուր ճյուղի համար առանձին: 1932 թվի համար հանրապետական, յերկրային և մարզային մասշտաբով տեղերին ուղարկել ոգոստոսի 20-ին: Այդ խորհուրդները պետք է լրացուցիչ կերպով մշակեն ու ճշտեն պլանները և մինչև սեպտեմբերի 15-ը հանձնեն այն ռայոններ, խնդիր դնելով, վոր ռայոնական մշակումներն ավարտվեն և ռայոններից հանդիպական պլաններ ստացվեն մինչև հոկտեմբերի 5-ը, վորպեսզի 1932 թվի վերջնական կազմված պլանը ներկայացվի Կենտխորհրդին մինչև հոկտեմբերի 20-ը: Կենտրոնական, հանրապետական, յերկրային ու մարզային կազմակերպությունների նկատմամբ պլանների մշակման ու կազմելու ժամկետը կրճատել 5 որով:

14. Պլենումը շեշտում է, վոր չորսամյակի կատարումն ապահովելու հիմնական պայմանը հանդիսանում է.

1) բոլշևիկյան գլխավոր գծի հաստատուն կիրառումը և պայքարն ամեն տեսակի օպորտունիզմի դեմ.

2) Ընկերության ամբողջ աշխատանքի և ղեկավարության մեթոդական վերակառուցումը.

3) հասարակայնության, կարգապահության և պատասխանատվության զարգացումն ու նշանակալից վերելքը.

4) կենդանության, օպերատիվության, հաշվառման և կատարման ստուգման ապահովումը.

5) ամբողջ Ընկերության ուշադրության կենտրոնում ապահովման և ընդգրկման, որի հետևանքով և աշխատանքի ու արտադրության որակի խնդիրները դնելը.

6) տեխնիկայի տիրապետման հիման վրա կադրերի պատրաստությունը կոնտրոլ առաջադրանքների աստիճանին հասցնելու մեծագույն յուրաքանչյուր կազմակերպության պարտավորությունը.

7) խնայողության ամենախիստ ռեժիմի պահպանումը.

8) գույքի պահպանումը, խնամումն ու օգտագործումը պատասխանատվությունը որակի խնդիրներ դնելը.

15. Պլենումը կոչ է անում Ընկերության բոլոր կազմակերպություններին կիրառել հաստատված պլանը, ամենայն չափով ծավալելով սոցիալիստական մրցակցությունը, հարվածայնությունը և հասարակական բուքսիրը: Պլենումը գտնում է, որ պլանի առաջադրանքները կարող են և պետք է ոչ միայն կատարվեն այլ և գերակատարվեն այն պարտադիր պայմանով, որ պլանը մշակվի հանդիպական կարգով և հասցվի այն մինչև Ընկերության յուրաքանչյուր բջիջը:

***

## ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

**ԽՍՀՄ Պաշը-Ավիաքիմի միության կենտխորհրդի 2-րդ պլենումի բանաձևը Ընկերության մատակարարման աշխատանքի հերթական խնդիրների մասին:**

*Պաշավիաքիմի գործնական աշխատանքի վարժական-նյութական բազայի ապահովումը հանդիսանում է հիմնական պայմաններից մեկը Ընկերության ամբողջ գործունեության հաջող զարգացման գործում:*

*Ընկերության մատակարարման մարմինների միասնական սիստեմ ստեղծելը, որոնց կազմակերպչական ձևավորումը, որպես ինքնուրույն տնտեսհաշվարկային ձեռնարկություններ, նրանց ֆինանսական որոշ ամրացումը, նրանց աշխատանքի մասշտաբի ընդարձակման հետ միասին մատակարարման գործում տվեց մի շարք գործնական նվաճումներ:*

*Սակայն մատակարարման դրությունը վկայում է, որ նա զգալիորեն յետ է մնում Պաշավիաքիմի զարգացման տեմպերից, անդամների մասսայի ակտիվության աճումից և այն բարձր պահանջներից, որ առաջադրվում են դեպի Ընկերության գործնական աշխատանքը, յետ են մնում Ընկերության հարաճուն պարտավորություններից հանդեպ յերկրի պաշտպանությունը (մանավանդ ռազմական տեխնիկայի բնագավառում):*

*Նման հետամնացությունը դիտելով որպես սպառնալիք Պաշավիաքիմի հնգամյակի կատարման համար, պլենումը մատնանշում է, որ միանգամայն անհանդուրժելի յե այդ հետամնացությունը հետագայում և անհրաժեշտ է ձեռք առնել ամենաշտապ միջոցառումներ՝ վերացնելու համար Ընկերության մատակարարման գործունեության մեջ յեղած ճեղքվածքները:*

*Պլենումն արձանագրում է մի շարք ամենալուրջ թերություններ մատակարարման աշխատանքում, որոնց թվին առաջին հերթին պետք է դասել հետևյալը.*

*ա) ԽՍՀՄ Պաշավիաքիմի մատակարարման մեջ բացակայում է ամբողջ Ընկերության մատակարարման հնգամյա մշակված պլան.*

*բ) Թե պաշտպանական գույքի մթերումների ու իրացման և թե արտադրական ու ֆինանսավորման բնագավառում տեղական Պաշավիաքիմի մատակարարման ամբողջ սիստեմի աշխատանքներում անբավարար է պլանայնությունը.*

*գ) Թույլ է կենտրոնական մատակարարման բաժնի կողմից տեղական գործունեության կենդանի ղեկավարությունը.*

*դ) անբավարար է տեղերում պաշտպանական գույքի բաշխումն ու հաշվառման դրությունը, ինչպես նաև այդ գույքի խնայողաբար, խնամքով օգտագործումը.*

*յե) տեղական առանձին մատակարարման բաժինների այնպիսի արտադրական և օժանդակ ձեռնարկություններ ունենալը, որոնք չեն համապատասխանում Ընկերության խնդիրներին (վարսավիրանոցներ, կաֆեներ, ուսիների արհեստանոցներ պահելը և այլն).*

*զ) ֆինանսական դրության թուլությունը մի շարք տեղական մատակարարման մարմիններում, ֆինանսական անկարգապահությունը և տնտեսհաշվարկի ու վարկավորման հիմնական ռեֆորմի պայմաններում պլանայնացման ու տնտեսավարության հարցերում փորձի բացակայությունը.*

*է) ֆինանսական պլանի սիստեմատիկ խախտումը, շնորհիվ շրջանառու միջոցներում անբավարար չափով մանյովրելուն և տեղական ընկերությունների նախագահությունների կողմից մատակարարման մարմինների շրջանառու միջոցներից զգալի գումարներ վերցնելը՝ մինչև բալանսների հաստատումը.*

*ը) մատակարարման կադրերի ոչ լրիվ և վորակով թույլ լինելը, կենտրոնում մեքենաներով հաշվառման բացակայությունը, ինչպես նաև Պաշավիաքիմի մատակարարման մարմիններում աշխատողների, վորակի բարձրացման համար միջոցառումների բացակայությունը, մի քանի կազմակերպությունների մատակարարման ապարատներում դասակարգայնորեն խորթ տարրեր լինելը.*

թ) չափազանց անբավարար է տեղերում վերահսկողությունն ու կատարման ստուգումը և բացակայում է պատշաճ ինֆորմացիան և աշխատանքի դրական փորձի փոխանակումը.

ժ) անբավարար է ծավալված ինքնաքննադատությունը մասմարմինների ապարատներում, անբավարար են աշխատանքի տեմպերի ու վորակի բարձրացման նպատակով սոցմրցակցությունն ու հարվածայնությունը:

Ընկերության մատակարարման ցանցի աշխատանքում՝ նրա գործնական աշխատանքի ապահովման վերաբերյալ յեղած թերությունների հետ միասին, պլենումը նշում է, վոր արդյունաբերությունը չի կատարել իր պարտավորությունները Պաշավիաքիմի պատվերների նկատմամբ, մանավանդ մասնագիտական և տեխնիկական գույքի վերաբերյալ:

Վորպեսզի հնգամյա պլանի հիման վրա՝ Ընկերության բոլոր տեսակի գործնական աշխատանքն ապահովվի գույքով լրիվին ու ժամանակին, մատակարարման գծով գործնական աշխատանքի ֆինանսական ու նյութական պլանը պետք է դառնա Ընկերության ամբողջ միասնական պլանի անխզելի մասը:

Պլենումը գտնում է, վոր տնտեսհաշվարկի պայմաններում ամենախիստ պլանայնության դրումն ու իրագործումը մասմարմինների ամբողջ սիստեմում, պայմանագրային պարտավորությունների կատարումը հանդիսանում է Ընկերության մասմարմինների ամենահիմնական ու մարտական խնդիրներից մեկը:

Պլենումն առաջարկում է.

ա) ԽՍՀՄ մասմարմնի առաջիկա խորհրդակցության համար մշակել մատակարարման ստորին այն ոդակների (ռայմասմարմնին, բազաներ) ստրուկտուրայի ու սիստեմի հարցը, վորոնք անմիջականորեն սպասարկում են Ընկերության գործնական կազմակերպությունները, նպատակ ունենալով առավելագույն չափով ուժեղացնել ուշադրությունը դեպի ռայոնների կարիքները և առաջին հերթին դեպի նրանց, ովքեր սպասարկում են աշխատանքի ինդուստրիալ, կոլտնտեսային ու խորհտնտեսային բնագավառները.

բ) ուժեղացնել ուշադրությունը դեպի Պաշավիաքիմի տրանսպորտային կազմակերպությունների մատակարարումը.

գ) հասնել նրան, վոր արդյունաբերությունը առավելագույն չափով լրիվին ու ժամանակին ապահովի Պաշավիաքիմի պատվերների կատարումը.

դ) ապահովել դեռ ընթացիկ տարում պաշտպանական գույքի հաշվառման, բաշխման, պահպանման և ոգտագործման միասնական սիստեմի կազմակերպումը, մշակելով Պաշավիաքիմի գործնական կազմակերպությունների նրա ծախսման համար ցուցակներ ու նորմաներ, ինչպես նաև սահմանելով աշխատանքի մեթոդոլոգիա պլանավորման, հաշվառման, հաշվետվության ու վիճակագրության բնագավառում.

յե) լայն հետազոտության ու կենդանի հրահանգում կատարել



Ընկերության մատակարարման կազմակերպություններում, կարգավորել սիստեմատիկ ինֆորմացիան և դրական փորձի փոխանակությունը.

զ) լայն ծավալել Պաշավիաքիմի արտադրական գործունեությունը պարտադիր պայմանով, վոր տեղերում արտադրական գործունեության ծավալումը կատարվի տնտեսական նախադրյալների գոյությամբ և այդ արտադրությունները համապատասխանեն Ընկերության անմիջական խնդիրներին. կատեգորիկ կերպով արգելվում է տեղերում կազմակերպել արտադրական ձեռնարկություններ առանց կենտրոնի մասմարմնի նախնական թույլտվության, իսկ ռայոններում առանց նախապես համաձայնեցնելու այդ մարզային, յերկրային և հանրապետական կազմակերպությունների հետ. ռայխորհուրդների այն արտադրական ձեռնարկությունները, վորոնք իրենց ծավալով ու նշանակությամբ անցնում են ռայոնական մասշտաբից, պետք է հանձնվեն մարզային ու յերկրային մասմարմիններին՝ միասնական ղեկավարության ու պլանավորման նպատակով.

է) ԽՍՀՄ Պաշավիաքիմի մասմարմինը պետք է 3-րդ կվարտալից վոչ ուշ կազմի բոլոր այն արտադրական ձեռնարկությունների հաշվառումը, վոր ունի Պաշավիաքիմը, վերանայի նրանց արտադրական ծրագրերը համաձայն տեխնիկական-արտադրական ու հումույթային հնարավորությունների և հաշվի առնելով տվյալ կազմակերպության և ամբողջ Ընկերության իրական պահանջները, մշակել 1932 թվի համար արտադրական միասնական պլան.

ը) Ընկերության հնգամյա պլանով կապիտալ շինարարության գծի ծավալման և աշխատանքի այդ բնագավառը համապատասխան ղեկավարությամբ ապահովելու անհրաժեշտության հետեվանքով այն կազմակերպություններում, վորտեղ ծավալված են շինարարության աշխատանքներ, մասմարմիններին կից ստեղծել հատուկ շինարարական սեկտորներ, վորոնց իրավասության տակ են մտնում շինարարության ապահովումը և հսկողությունը շինարարության ընթացքի վրա: Շինարարության առանձին ոբյեկտների ծավալի վորոշումը, միջոցներով ապահովումը և պլանի հաստատումը մտնում են Պաշավիաքիմի տեղական խորհուրդների մեջ: Կապիտալ շինարարության կիրառման ուշադրությունը դարձնել պահեստների, շենքերի շինարարության վրա, պահելու համար հանույթներ, հրապարակներ և թունավոր նյութեր:

թ) Ընկերության ավիացիոն աշխատանքի աճումը պահանջում է անմիջապես կազմակերպել համապատասխան ավիացիոն սեկտորներ նրա մատակարարման մարմիններում. այդ պատճառով ամբողջ ավիամատակարարումը պետք է անցնի Պաշավիաքիմի մասմարմնի միջոցով բացառությամբ ավիոդպրոցների մատակարարման, վորոնք մնում են ԽՍՀՄ Պաշավիաքիմ մատակարարման կենտրոնական և անմիջական մատակարարման տակ՝ ավիացիոն մատակարարման գույքի տեսակներից (սավառնակային-մոտորային, էքսպլոատացիոն, վերանորոգման գույք և այլ). այս դեպ-

քում ԽՍՀՄ Պաշավիաքիմի մատամարմինը հաշվարկները կատարում է անմիջորեն դպրոցների հետ, որոնք պետք է անմիջապես անցնեն տնտհաշվարկի, բանալով ընթացիկ հաշիվ. մինչև ընթացիկ հաշիվ բանալը ուսուցչական դպրոցների հաշվարկը կատարում է Պաշավիաքիմի տեղական Ընկերությունը իր մատամարմնի միջոցով, ժամանակին փոխադրելով դպրոցներին ուղարկված գույքի համար հասանելիք գումարները:

ժ) Մատամարմինների շահույթից կանոնադրական հատկացումները հօգուտ Պաշավիաքիմի տեղական ընկերության կատարել տարին մեկ անգամ հաշվեկշիռը հաստատելուց հետո. Հնարավոր համարել հատկացումների կատարումն ըստ կվարտալների՝ նայած ֆինանսական դրության, սակայն ոչ շուտ քան 3-րդ կվարտալը.

ի) ԽՍՀՄ Պաշավիաքիմի մատամարմնի կողմից վարկավորման սահմանի (լիմիտի) կենտրոնացման մասին որոշումն ընդունել որպես փորձ 3-րդ կվարտալի համար, որպեսզի 4-րդ կվարտալի սկզբին, նայած փորձի արդյունքներին, արմատացնել կամ վերացնել այդ կարգը.

լ) բոլոր տեղական խորհուրդներն ու մատամարմինները պետք է միջոցներ ձեռք առնեն մոբիլիզացիայի ենթարկելու վարի կազմակերպությունների դրամական ռեսուրսները, կենտրոնացնելու այն միջոցները, որ ստացվում են ի հաշիվ մատակարարման բաշխման պլանի ռայոնական, երկրային ու մարզային մատամարմինների դրամարկղներում.

խ) ԽՍՀՄ Պաշավիաքիմի մատամարմնի՝ ս. թ. հոկտեմբերին հրավիրել Համամիութենական մատակարարման խորհրդակցություն:

## ԽՈՍՔԻՑ ԴԵՊԻ ԳՈՐԾ

### Վերակառուցման կոնկրետ դիրեկտիվներ

1. Բացառիկ կարևոր նշանակություն տալով Կենտխորհրդի պլենումի որոշումներին, որն ընդունել է Ընկերության գործունեության վերակառուցման ծավալուն ծրագիր, ինչպես նաև Պաշավիաքիմի զարգացման նոր էտապը բնորոշող նոր պարագայի, բարդացած խնդիրների բարձրացած պատասխանատվության համեմատ «նոր ձևով» աշխատանքին.

ա) չտալ կարգով Կե՛նտխորհրդի պլենումի որոշումները մանրակրկիտ մշակման համար հասցնել Ընկերության անդամների ամբողջ մասսային, ներգրավելով պլենումի որոշումների մասսայականացման կամպանիային խորհրդային հասարակայնությունը,—արհմիություններին, կոմսոմոլին և մի շարք կամավոր ընկերություններին.

բ) հասնել նրան, որ ամենաարագ կերպով իրագործեն պլենումի որոշումները Ընկերության կազմակերպությունների ամբողջ ցանցում, ապահովելով բոլոր օղակների աշխատանքում վճռական բեկում, հատուկ շեշտ դնելով Ընկերության որակապես բարձր



գործնական աշխատանքի վերակառուցման ու դրման վրա և հասնելով Պաշավիաքիմի հետագա ավելի հուժկու աճման ու ամրացմանը.

2. Այդ նպատակով.—

ա) օգոստոս ու սեպտեմբեր ամիսների ընթացքում անցկացնել բացատրական կամպանիա պլենումի որոշումների շուրջը, ընդգրկելով այդ կամպանիայով Ընկերության բոլոր օղակներն ու գործնական կազմակերպությունները. Ծավալուն լայն ինքնաքննադատության հիման վրա հասնել աշխատանքում հասարակական սկզբունքների և ակտիվության խիստ բարձրացման և աշխատանքի ավելի բարձր աստիճանի բարձրացնելուն.

բ) համաձայնեցնել այդ կամպանիայի կիրառումը բերքահավաքի, ԲԳԿԲ զորակոչի, ռազմական դպրոցների հավաքագրման կամպանիաների հետ.

գ) հասնել նրան, որ լիովին իրացվեն դիրեկտիվ մարմինների ու Համարհմխորհի (ՎՑՍՊՍ) որոշումները ռազմադաստիարակչական աշխատանքի դրման և անցկացման մեջ Պաշավիաքիմի կազմակերպչական դերի մասին՝ ամբողջ խորհրդային հասարակայնության կողմից, մանավանդ ապահովել Կենտխորհրդի ու Համարհմխորհի ցուցումների վճռական կիրառումը՝ ձեռնարկություններում ռազմական աշխատանքի միասնական պլանի մասին (դիրեկտիվ № 20, 31 թ. մարտի 30-ի):

դ) հաշվետու զեկուցումներ անցկացնել նախագահության ու Կենտխորհրդի ուժերով, մոբիլիզացիայի ենթարկելով այդ նպատակի համար առաջին հերթին ընկ. ընկ. Ունշլիխտին, Սեմաշկոյին, Մալինովսկուն, Պոժարսկուն, Լիպելիսին, Ավինովիցկուն, Դուբրովսկուն, Գամարնիկին, Եգերդալիդին, Ցեդորովին, Անկուդինովին, Զերնիցկայային, Մեխոնոշինին, Զեկինին, Միխելսոնին, Ֆիշմանին, Ամիրնովին, Լևինին, Խմելևսկուն և ուրիշներին, խոշորագույն պրոլետարական կենտրոններում, ինդուստրիայի գիգանտներում, նոր շինարարություններում, խոշորագույն խորհտնտեսություններում, ՄՏԿ, կոլտնտեսություններում.

յե) պարտավորեցնել Կենտխորհրդի բոլոր անդամներին, պլենումի մասնակցողներին, ամենաակտիվ մասնակցություն ցույց տալ այդ կամպանիային.

զ) կամպանիան ապահովելու համար չտալ հրատարակել մեթոդական մշակումներ պլենումի արդյունքների վերաբերյալ բանաձևերով, առանձին պլենումի բանաձևերը, Կենտխորհրդի նկարագրող հաշվետվությունը, ընկ. ընկ. Ունշլիխտի, Սեմաշկոյի ու Մալինովսկու ճառերը, նյութերը, Ընկերության վարի օղակներում աշխատանքի վերակառուցման մասին.

է) ապահովել կամպանիայի լուսաբանումն ընդհանուր և պաշավիաքիմյան մամուլում. զետեղել Ընկերության ղեկավարների մի շարք հոդվածներ կենտրոնական մամուլում. լուսաբանել կամպանիայի լրիվ ընթացքը Ընկերության ամսագրերում ու թերթերում.

բ) անցկացնել ռադիոմիտինգներ ու ռադիոզեկուցումներ և մրցանակաչեր պլենումի որոշումների առթիվ՝ ռադիոհաղորդման գծով.

թ) պարտավորեցնել մարզային, երկրային ու հանրապետական կազմակերպություններին, առանց սպասելու կենտրոնից աշխատողներ գալուն, ապահովել կամպանիաների լրիվ ծավալումը, նրա անցկացման համար մոբիլիզացիայի ենթարկել Պաշտպանքիմի նախագահությունների ու խորհուրդների առավելագույն թվով անդամներին.

3. Ընկերության գործունեության մեջ ժերկրորդական փոքր ֆոնդերի կրճատման մասին պլենումի որոշման իրացման ժամանակ անհրաժեշտ համարել այդ կրճատումները կատարել գլխավորապես պակասեցնելով կամպանիաների թիվը, կոնկրետ յուրաքանչյուր կազմակերպության համար մթերման ֆոնդեր կատարելու մասը, ինչպես նաև գյուղատնտեսական աշխատանքի նկատմամբ: Վարի կազմակերպություններին տալ հարցի առթիվ տալ հատուկ դիրեկտիվ:

4. Կազմակերպչական վերակառուցման բնագավառում և զարգացումն պլենումի որոշումների.—

ա) մի ամսվա ժամանակամիջոցում դիրեկտիվը և մարզային, երկրային, հանրապետական, ռայոնական կազմակերպությունների կազմակերպչական ստրուկտուրայի սխեման ուղարկել Ընկերության վարի օղակներին.

բ) բջիջի նոր կանոնադրության նախնական քննարկումն ապահովել բջջային ակտիվի խորհրդակցություններում.

գ) 1931 թվին անցկացնել աշխատանքի ճյուղերի համամիութենական խորհրդակցություններ, նախապես մշակելով տեղերում քննարկության ենթակա հարցերը. կազմաշխատանքի, ագիտպրոպաշխատանքի, ձեռնարկություններում, արտադրություններում, ազգության փոքրամասնություններում, մանկանց ու կանանց մեջ տարվող աշխատանքների վերաբերյալ:

5. Անցկացնել մի շարք շտապ ու վճռական միջոցառումներ՝ լուծելու համար կադրերի պրոբլեմը, ինչպիսին են՝

ա) ստեղծել Կենտխորհրդին կից կադրերի բաժին՝ Պաշտպանքիմի համար կադրերի հաշվառման, ուսումնասիրության, առաջացման ֆունկցիաներով և ղեկավար կադրերի պատրաստումով (քարտուղարներ, կազմաշխատողներ, հրահանգչական կազմ).

բ) կիսամյակի ընթացքում առաջ քաշել և ամրացնել ղեկավար ակտիվի կազմի աշխատանքի մեջ Պաշտպանքիմի մինչև 1000 ակտիվ անդամ և նրանցից 25 հոգի մտցնել Կենտխորհրդի ապարատի մեջ.

դ) վոչ ուշ, քան ս. թ. դեկտեմբեր ամիսը ստեղծել կենտրոնական բարձր դասընթացներ պատրաստելու համար հանրապետական, երկրային, մարզային ու ռայոնական մասշտաբներով ղեկավար աշխատողներ.



դ) ուղարկել երկիրներն ու մարզերը վոչ պակաս քան յերկու շարժական զլլրոց՝ պատրաստելու ու վերապատրաստելու համար ղեկավար կադրեր, պարտավորեցնելով վարի կազմակերպություններին շտապ ծավալել դասընթացների ցանց պատրաստելու համար վարի օղակների ղեկավար ակտիվ.

յե) վոչ ուշ քան ս. թ. հոկտեմբեր ամիսը տեղերին ուղարկել բոլոր աստիճանների ակտիվի դասընթացների ծրագրեր:

6. Ճանաչելով ինֆորմացիայի անճող դերը և ամենակարճ ժամանակամիջոցում տեղերի դրական փորձ հավաքելն ու ընդհանրացնելը պատշաճ բարձրության վրա դնելու վճռական պարտավորությունը, անհրաժեշտ է.

ա) ամենակարճ ժամանակամիջոցում ամրացնել Կենտխորհրդի և Ընկերության մարզային (երկրային, հանրապետական) ինֆորմացիոն սեկտորները.

բ) ստեղծել Կենտխորհրդին կից հատուկ մեթոդական կաբինետ մշակելու և ընդհանրացնելու համար տեղական փորձը, մշակելու Ընկերության առանձին ճյուղերի և զանազան աշխատանքների (զանազան տիպի ձեռնարկություններ, աշխատավորների զանազան կատեգորիաներ և այլն) կատարած աշխատանքի մեթոդները, պարտավորեցնելով վարի կազմակերպություններին, հենվելով կամավոր լայն ակտիվի վրա, նույնպիսի աշխատանք կատարել տեղերում և ապահովել տեղերի ամուր կապը Կենտխորհրդի մեթոդական կաբինետի հետ:

7. Ղեկավարությունն ու կապը տեղերի հետ ամրացնելու և փորձի փոխանակության նպատակով.

ա) սկսել հրատարակել մեթոդական բյուլետեն.

բ) ձգտել, վորպեսզի «Ռազմքիմիկ» շաբաթաթերթը տասնօրյակից անցնի հնգօրյակի, իսկ «Ավիացիա և Խիմիա» ամսագիրը ամիսը մի անգամից անցնի ամիսը յերկու անգամվա, ուժեղացնելով նրանց մեջ տեղերի փորձի փոխանակման բաժինները, բարձրացնելով պահանջկոտությունը դեպի ամսագրերի բովանդակությունը և ապահովելով ավելի սուլդությունն ու պահանջկոտությունը դեպի խմբագրությունը.

գ) ընդարձակել փոխանակման պրակտիկան կենտրոնի ու տեղերի աշխատողների ընկերական նամակների միջոցով.

դ) հաստատել, վոր բաժնի վարիչները անմիջորեն ղեկավարում են ստորադաս կազմակերպությունների բաժինները և դրանք են ստորադաս կազմակերպությունների գրությունները են վարում ստորադաս կազմակերպությունների քարտուղարների հետ աշխատանքների պլանի հաստատման հարցերի վերաբերյալ:

8. Իրացնել պլենումի վորոշումը պաշտպանքիմյան եկտրոնական որաթերթ ունենալու մասին. հանձնարարել ընկ. Ունշլիխտին միջնորդելու համապատասխան ղեկավար մարմինների առաջ այդ հարցի լուծման մասին:

9. Ընկերության ամսագրերում ու թերթերում մտցնել «Պաշտպանքիմը պետք է ճանաչի իր ակտիվիստներին» եջեր:

41.792

10. Պարտավորեցնել հանրապետական, յեր[...] յին Պաշավիաքիմի խորհուրդներին՝ 1932 թ. կոնտրոլ թվերի լրացումից ու ճշտումից հետո, ուղարկել ժամանակին այդ թվերը ռայոնները, ապահովելով ռայոններից հանդիպական պլանների յետ ստացումը մինչև 5 X և վերջնականապես կազմելով ներկայացնել այդ թվերը Կենտխորհրդին մինչև 20 X:

11. Լսել ոգոստոս-նոյեմբեր ժամանակաշրջանում զեկուցումներ պլենումի վորոշումների իրացման կամպանիաների ընթացքի ու արդյունքների մասին Ընկերության 2 մարզային (յերկրային), 3 ռայոնական կազմակերպություններից, 3 արդյունաբերական և 2 կոլտնտեսական-խորհտնտեսական բջիջներից:

ՀՀ Ազգային գրադարան
NL0227019

Գլավլիտ № 6976(բ) Պատվեր № 6084 Տիրաժ 1500

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ ԵՐԵՎԱՆ